

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

10 հունիսի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:
- Ֆարմացիայի ինստիտուտի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:
- Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

- Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվության հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ք.գ.թ. դոցենտ Ա. Մկրտչյանին, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց այն մասին, որ համաձայն ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի 114-րդ կետի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման գիտխորհուրդը պետք է լսի և գնահատի կրթական ծրագրերի հաշվետվությունները:

Ելույթ ունեցան՝ «Ֆարմացիա» բակալավրի (առկա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Միմոնյանը և «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Գեոլչանյանը, ովքեր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները: Հ. Միմոնյանը հաղորդեց այն մասին, որ 2024 թվականի հունվար ամսին «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիրը ստացել է միջազգային հավաստագիր՝ ASIIN միջազգային հավատարմագող կազմակերպության մեկ տարի տևողությամբ, իսկ 2024 թվականի հոկտեմբերին որոշ կետերի վերանայումից հետո կրթական ծրագիրը կարող է հավատարմագրվել առավելագույն ժամկետով՝ մինչև 2029 թվականը: «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիրը 2023 թվականին անցել է ընթացիկ մշտադիտարկում, ինչի արդյունքում, ըստ ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի, կազմվել է մշտադիտարկման հաշվետվությունը, որը ներառում է նաև առաջիկա երկու ուսումնական տարիների համար կրթական ծրագրի որակի բարելավման գործողությունների պլանը: Հ. Միմոնյանը և Ա. Գեոլչանյանը հաղորդեցին նաև, որ կազմվել և հաստատվել է «Ֆարմացիա» և «Դեղագործական քիմիա» բակալավրի կրթական ծրագրերի 2024/25 ուսումնական պլանը, որը 2023/24 պլանի համեմատ ենթարկվել է փոփոխությունների՝ ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի նոր հաստատված կառուցվածքին և բովանդակությանը համապատասխանեցնելու նպատակով: Արդյունքում կրճատվել են որոշ մասնագիտական դասընթացների լսարանային դասաժամերը: Կրթական ծրագրի ուսումնական պլանում ավելացել է մասնագիտական կամընտրական դասընթացների քանակը: Ուսումնական տարվա ընթացում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ «Ֆարմացիա» և «Դեղագործական քիմիա» բակալավրի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների հետ՝ կրթական ծրագրի առարկայացանկին, քննական ձևերին և գնահատման նոր համակարգին ծանոթացնելու նպատակով:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատել «Ֆարմացիա» բակալավրի (առկա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Միմոնյանի և «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Գեոլչանյանի հաշվետվությունները:

Ելույթ ունեցան՝ «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Միմոնյանը, ովքեր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները:

Հ. Միմոնյանը հաղորդեց այն մասին, որ կազմվել և հաստատվել է «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի 2024/25 ուսումնական պլանը, որը 2023/24 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել: «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի 2023/24 ուսումնական պլանում «Դեղագործական մանրէաբանություն» դասընթացը դասավանդվել է ռուսերեն լեզվով: Հանդիպումներ են տեղի ունեցել ինչպես դասավանդող դասախոսի, այնպես էլ ուսանողների հետ՝ օտար լեզվով դասընթացի դասավանդման արդյունավետությունը և խնդիրները պարզելու նպատակով: Ուսանողները որոշակի դժվարություններ են ունեցել դասընթացը օտար լեզվով յուրացնելու հետ կապված, մասնավորապես, քննությունը ռուսերեն լեզվով հանձնելիս: Մագիստրատուրայի բաժնի վարիչի հետ քննարկումներից հետո, որոշվեց 2024-2025 ուսումնական տարում ևս դասընթացը դասավանդել ռուսերեն լեզվով, որպեսզի առավել ճշգրիտ գնահատվի դասընթացի օտար լեզվով դասավանդման արդյունավետությունը:

Ա. Հովհաննիսյանը հաղորդեց, որ 2023-2024 թ. «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրատուրայում ուսանել են և ավարտել 30 ուսանող, որոնք բոլորը հաջողությամբ պաշտպանել են իրենց մագիստրոսական թեզերը: Դասավանդողների կազմում փոփոխություններ չեն եղել, ընդհանուր առմամբ ուսանողների կողմից դասավանդումը գնահատված է լավ: «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագրի 2024/25 ուսումնական պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ՝ համաձայն ԵՊՀ ընդունված կարգի: 1 տարով ընթացող մագիստրատուրայի ուսումնական պլաններում հանվել են օտար լեզուները, ներառվել են Ձեռնարկատիրություն, Կարիերայի կառավարում, Նախագծերի կառավարում և գնահատում ընդհանուր դասընթացները: Մասնագիտական կրթամասի մեջ ավելացել է Կլինիկական դեղաբանություն-1 առարկան, որը ըստ ԵՊՀ պահանջների պետք է դասավանդվի անգլերեն լեզվով:

Կամընտրական դասընթացներում ներառված են՝ ԿԱՄ-երի որակի հսկման մեթոդներին, Ֆարմակագենոմիկա, Գենային թերապիա, Դեղանյութերի հսկման մեթոդներին: Կրճատվել է դասընթացներին հատկացվող ժամաքանակը համաձայն ԵՊՀ պահանջների, ավելի շատ ժամանակ հատկացվել է ուսանողի անհատական ծանրաբեռնվածությանը: Արդյունքում ուսումնական պլանի բոլոր դասընթացներն ունեն կամ 3 կամ 6 կրեդիտ ծանրաբեռնվածություն:

Ուսումնական տարվա ընթացում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների հետ՝ կրթական ծրագրի առարկայացանկին, քննական ձևերին և գնահատման նոր համակարգին ծանոթացնելու նպատակով: 2024-2025 ուսումնական տարում նախատեսվում է մագիստրոսի նշված կրթական ծրագրերի դասախոսների հետ հանդիպում՝ նոր գնահատման համակարգի առավելությունները և թերությունները քննարկելու համար:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատել «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանի և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Միմոնյանի հաշվետվությունները:

2. Ֆարմացիայի ինստիտուտի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ առաջին տարվա ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց «Կոդային ռադիկալում չհագեցած խմբերով տեղակալված (S)- α ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ և բժշկականաբանական սկրինինգ» թեմայով ասպիրանտուրայում ուսուցման առաջին տարում կատարված գիտահետազոտական աշխատանքները: Էմմա Խաչատրյանը տեղեկացրեց նաև, որ հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները «Ընդհանուր պատրաստվածություն» կրթամասից՝ ստանալով 33 կրեդիտ, որից պարտադիր դասընթացներից՝ 12 (Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ-4 կրեդիտ, Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն -4 կրեդիտ, Անզլերեն լեզու- 4 կրեդիտ), իսկ ընտրովի դասընթացներից՝ 21 կրեդիտ

(Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն- 3 կրեդիտ, Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում -3 կրեդիտ, Համալսարանական դասավանդման դիդակտիկա - 3 կրեդիտ, Գիտաչափություն և գիտական շտեմարաններ - 3 կրեդիտ, Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ - 6 կրեդիտ, Անձնային աճ և ինքնակարգավորում – 3 կրեդիտ): Ներկայումս ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին մշակված ծրագրով ասպիրանտն շարունակում է իրականացնել ատենախոսության շրջանակներում գրականության ուսումնասիրության և գիտահետազոտական աշխատանքները:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով ասպիրանտուրայում ուսուցման առաջին տարում կատարված աշխատանքները՝ ատեստավորել ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանին:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ առաջին տարվա ասպիրանտ Միքայել Սամվելի Թորոսյանին, ով ներկայացրեց «Եռաչափ տպագրությամբ կերամիկական իմպլանտների ստացումը և դրանց մեջ հակաբիոտիկների ներդրման արդյունավետության հետազոտումը» թեմայով ասպիրանտուրայում ուսուցման առաջին տարում կատարված աշխատանքները: Միքայել Թորոսյանը տեղեկացրեց նաև, որ հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները «Ընդհանուր պատրաստվածություն» կրթամասից՝ ստանալով 33 կրեդիտ, որից պարտադիր դասընթացներից՝ 12 (Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ-4 կրեդիտ, Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն -4 կրեդիտ, Անգլերեն լեզու- 4 կրեդիտ), իսկ ընտրովի դասընթացներից՝ 21 կրեդիտ (Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն- 3 կրեդիտ, Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում -3 կրեդիտ, Համալսարանական դասավանդման դիդակտիկա - 3 կրեդիտ, Գիտաչափություն և գիտական շտեմարաններ - 3 կրեդիտ, Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ - 6 կրեդիտ, Անձնային աճ և ինքնակարգավորում – 3 կրեդիտ): Ներկայումս ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին նախապես մշակված ծրագրով շարունակում է իրականացնել ատենախոսության շրջանակներում գրականության ուսումնասիրության և գիտահետազոտական աշխատանքները:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով ասպիրանտուրայում ուսուցման առաջին տարում կատարված աշխատանքները՝ ատեստավորել ասպիրանտ Միքայել Սամվելի Թորոսյանին:

3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Անի Դադայանին, ով հաղորդեց, որ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանօ կողմից ներկայացվել է հայտ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանը, ով ներկայացրեց «Թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների ստացում և կիրառում» վերնագրով հայտը: Նա նշեց, որ առաջարկվող նախագծի նպատակն է նախագծել, սինթեզել և բնութագրել թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների շարք, ինչպես նաև գնահատել սինթեզված նոր ածանցյալների պոտենցիալ հակաքաղցկեղային ակտիվությունը, ԴՆԹ-ի և ամֆիլոիդային վահանակների հետ կապվելու ունակությունը՝ կենսապատկերման, հիվանդությունների ախտորոշման և նյութագիտության մեջ կիրառության նպատակով:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) երաշխավորել հայտի ֆինանսավորումը:

**Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ., դոցենտ**

Ա. Մկրտչյան

**Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ**

Ա. Դադայան